ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2024թ. հունիսի 7-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 23-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց առաջ, խորհրդի նախագահի առաջարկով, խորհրդի անդամները 1 րոպե լռությամբ ոտնկայս հարգեցին խորհրդի անդամ, ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.թ. Գագիկ Սերյոժայի Գալստյանի հիշատակը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում
2. Մագիստրատուրայի կրթական նոր ծրագրի հաստատում
3. Բակալավրի կրթական նոր ծրագրի հաստատում
4. Մագիստրատուրայի և բակալավրի կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվություն
5. Ընթացիկ հարցեր

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում

1.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները երկուսն են՝ Հովակիմյան Լուսինե Մարգարի (3-րդ տարի), Մկրտչյան Մարիանա Հայկազի (2-րդ տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Լուսինե Մարգարի Հովակիմյանի «ՀՀ պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը թվայնացման

գործիքակազմի կիրառմամբ» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյան) ատենախոսության 1-ին գլուխը պատրաստ է, 2-րդ գլուխը ավարտման փուլում է, հավաքագրվել են նյութեր ատենախոսության 3-րդ գլխի վերաբերյալ: Ասպիրանտը հանձնել է մասնագիտական քննությունը և 3 հոդվածներ տպագրման փուլում են:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Մարիանա Հայկազի Մկրտչյանի «Բիզնես գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ ցանցային կազմակերպություններում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյան) ատենախոսության 1-ին գլուխը պատրաստ է և 1 հոդված տպագրման փուլում է:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեցին, որ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար:

1.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 03.06.2024թ. թիվ 13 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Լուսինե Մարգարի Հովակիմյանի (3-րդ տարի), Մարիանա Հայկազի Մկրտչյանի (2-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել: Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

1.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները երեքն են՝ Դավթյան Նարե Սիմոնի (3-րդ տարի), Թիրաբյան Տիգրանուհի Վարուժանի (2-րդ տարի), Վարդանյան Միեր Գագիկի (2-րդ տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Նարե Սիմոնի Դավթյանը «Բայեսյան նեյրոնային ցանցերի կիրառությունը դասակարգման խնդիրներում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյան) ատենախոսության համար կատարել է գրականության ուսումնասիրում, վերլուծությունների իրականացում, հիմնական կոնցեպտների դուրսբերում: Իրականացրել է մինչ այժմ Բայեսյան նեյրոնային ցանցերի կիրառությունների վերլուծություն, աշխատանքի համար հնարավոր էական նշանակություն ունեցող մոդելների

առավել մանրամասն ուսումնասիրություն: Ասպիրանտը հանձնել է բոլոր քննությունները՝ կուտակելով այդ մասով սահմանված անհրաժեշտ կրեդիտները, 1 հոդված տպագրման փուլում է:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Տիգրանուհի Վարուժանի Թիրաբյանը «Ֆինանսական ռիսկերի կառավարումը ժամանակային շարքերի և մեքենայական ուսուցման մեթոդների կիրառմամբ» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյան) ատենախոսության շրջանակներում կատարել է ֆինանսական ռիսկերի կառավարման մեթոդներին, նրանց թերություններին և առավելություններին վերաբերող մասնագիտական գրականության հավաքագրում և ուսումնասիրում: Ասպիրանտը հանձնել է ընդհանուր պատրաստվածության կրթամասի պարտադիր դասընթացներից՝ «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» (4 կրեդիտ), իսկ կամընտրականներից՝ «Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն», «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ», «Անձնային աճ և ինքնակարգավորում», «Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ» (ընդհանուր 15 կրեդիտ) դասընթացների ստուգարքները:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Մհեր Գագիկի Վարդանյանը «Բարդության տնտեսագիտության մոդելավորման հիմնախնդիրները տվյալագիտության գործիքակազմով» թեմայով (ղեկավար տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյան) ատենախոսության համար կատարել է գրականության ուսումնասիրում, տեսական և էմպիրիկ վերլուծությունների իրականացում: Ասպիրանտը հանձնել է ընտրովի դասընթացներից՝ «Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ», «Անձնային աճ և ինքնակարգավորում», «Գիտության փիլիսոփայություն», «Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում» (ընդհանուր 20 կրեդիտ) և պարտադիր դասընթացներից՝ «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն)», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» (ընդհանուր 12 կրեդիտ) դասընթացների ստուգարքները: Անցել է փորձառություն «ՅՈՒՔՐԱՖԹ» կազմակերպությունում 2023թ-ին՝ որպես «մեքենայական ուսուցման ինժեներ | ML Engineer» (10 կրեդիտ): Ներկայացրել է զեկույց "Richardson's multilateral military expenditure model implementation via sentiment analysis of news data: within the framework of Complexity Economics" թեմայով (The 13th Annual Meetings of the Armenian Economic Association were held on June 22-24, 2023): Տպագրվել է 3 հոդված, ևս 2 հոդված տպագրման փուլում են:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեցին, որ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար:

1.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 30.05.2024թ. թիվ 10 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Նարե Սիմոնի Դավթյանի (3-րդ տարի), Տիգրանուհի Վարուժանի Թիրաբյանի (2-րդ տարի), Միեր Գագիկի Վարդանյանի (2-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել: Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

2. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ստարտափերի կառավարում» մագիստրատուրայի կրթական նոր ծրագրի ստեղծման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը նշեց, որ ամբիոնը պլանավորել է մագիստրատուրայի ևս մեկ կրթական ծրագիր («Ստարտափերի կառավարում», 1 տարի, 60 ECTS, դասավանդման լեզուն՝ անգլերեն) ունենալ, այդ նպատակով կստեղծվի աշխատանքային խումբ կրթական ծրագրի մշակման համար, որը սահմանված կարգով լիցենզավորվելուց հետո հավանաբար կգործի 2025-2026 ուստարվանից: Հավելեց, որ «Ստարտափերի կառավարում» մագիստրատուրայի կրթական ծրագրի թիրախը օտարերկրյա ուսանողներն են:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ կարևորելով բուհ-աշխատաշուկա համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը, նպատակ հետապնդելով բարձրացնելու ստարտափ էկոհամակարգի արդյունավետությունը և բարձրագույն որակավորմամբ համապատասխան մասնագետների պատրաստումը, 2023թ. նոյեմբերին ստորագրվել է համագործակցության եռակողմ համաձայնագիր՝ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի, ՏԿՖ դեկան Կառլեն Խաչատրյանի և «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամի տնօրեն Արսեն Հարությունյանի մասնակցությամբ: Հավելեց, որ «Ստարտափ Արմենիա» հիմնադրամի կազմակերպած վերջին սամիթին (Դուբայում) մասնակցել է «Կառավարում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Լիանա Խաչատրյանը: Ընդգծեց, որ ծրագրի թիրախը պետք է լինեն Մերձավոր Արևելքի երկրներից, Ասիայից պոտենցիալ ուսանողները, հիմնադրամը պատրաստ է օժանդակել ծրագրի մեկնարկմանը՝ մասնագիտական խորհրդատվությամբ և մասնագետներ հրավիրելով: Հիմնական շեշտադրումը միջազգայնացման հարցին մեծ ուշադրություն դարձնելն է՝ օտարերկրյա ուսանողների թվաքանակի աճը: Հավելեց, որ ծրագիրը ողջունելի է և ծավալված քննարկման նպատակը՝ կրթական ծրագրի մշակման համար ՏԿՖ գիտխորհրդի երաշխավորությունը ստանալն է:

3. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., դոցենտ Գ.Ասլանյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը:

Հարցադրումներն առնչվում էին արտերկրներում նույն որակավորմամբ մասնագետներ պատրաստելուն, ծրագրի անվանմանը և դասախոսական կազմին:

4. Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հարցերին ամփոփ պատասխանելով նշեց, որ ամբիոնը չափորոշիչների մասով մանրակրկիտ աշխատանք է կատարել (benchmarking), ճշգրիտ այդ անվանումով ծրագրեր չկան, ծրագրի անվանումը որոշվել է մասնավոր ոլորտի գործընկերների հետ քննարկումների արդյունքում: Անհրաժեշտության դեպքում անվանումը կարող է վերաձևակերպվել, ծրագրի ավարտին շնորհվող որակավորումը միանշանակ է՝ կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան, իսկ ծրագրի դասախոսական կազմի մասով՝ պետք է շեշտադրվեն հրավիրյալ դասախոսները:

5. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, ամփոփելով քննարկումը, առաջարկեց «Ստարտափերի կառավարում» մագիստրատուրայի կրթական նոր ծրագրի ստեղծման մասին գիտխորհրդի որոշումը դնել քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ստարտափերի կառավարում» (1 տարի, 60 ECTS, դասավանդման լեզուն՝ անգլերեն) մագիստրատուրայի կրթական նոր ծրագրի ստեղծման հարցը՝ քվեարկության 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

3. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Մաթեմատիկական տնտեսագիտություն և տվյալագիտություն» բակալավրի կրթական նոր ծրագրի ստեղծման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը նշեց, որ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների և տվյալագիտության ծրագրերի կիրառման նպատակով, ամբիոնի նախաձեռնությամբ պլանավորվել է ֆակուլտետում բակալավրի ևս մեկ կրթական ծրագիր ունենալ՝ «Մաթեմատիկական տնտեսագիտություն և տվյալագիտություն» անվանմամբ: Կրթական ծրագրի մշակման համար արդեն ստեղծվել է աշխատանքային խումբ, որը զգալի աշխատանք է կատարել և շարունակում է աշխատել: Կրթական ծրագիրը՝ մշակման աշխատանքների ավարտից և սահմանված կարգով լիցենզավորվելուց հետո, կգործի 2025-2026 ուստարվանից:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ բակալավրի մակարդակում այս նախաձեռնությունը ճիշտ ժամանակին է արվում, քանի որ պետական մի շարք կառույցների,

ԿԲ-ի, Ֆինանսների նախարարության, միջազգային կազմակերպությունների հետ պարբերաբար հանդիպումները փաստում են, որ ծրագրավորման լեզուների իմացությամբ և մաթեմատիկայի խորքային գիտելիքներով տնտեսագետների մեծ պահանջարկ կա: Հավելեց, որ այս նախաձեռնությամբ փաստացի որոշում ենք 4 տարվա բակալավրի ծրագիր կայացնել, որը ֆակուլտետում 4-րդ ուղղությունն է լինելու: Ֆակուլտետում գործող 4 ամբիոններից յուրաքանչյուրը կունենա իր բակալավրի կրթական ծրագիրը և պատասխանատու կլինի դրա համար: Այս ծրագիրը կգործի գործող 3 ծրագրերի ֆորմատով՝ ուղղակի մաթեմատիկայի և ծրագրավորման լեզուների բաղադրիչների գերակայությամբ, մասնագիտության թվանիշը՝ վիճակագրություն:

3. Տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը իր ելույթի խոսքում նշեց, որ այս ծրագրի կայացման դեպքում համագործակցության լայն հնարավորություններ կստեղծվեն ինչպես Սան Խոսեի պետական համալսարանի (ԱՄՆ), այնպես էլ Տեխասի Սան Անտոնիոյի համալսարանի (ԱՄՆ) հետ՝ մագիստրատուրայի և բակալավրի կրթական ծրագրերի շրջանակում:

4. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, ամփոփելով քննարկումը, առաջարկեց «Մաթեմատիկական տնտեսագիտություն և տվյալագիտություն» բակալավրի կրթական նոր ծրագրի ստեղծման մասին գիտխորհրդի որոշումը դնել քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Մաթեմատիկական տնտեսագիտություն և տվյալագիտություն» բակալավրի կրթական նոր ծրագրի ստեղծման հարցը՝ քվեարկության 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

4. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի և բակալավրի կրթական ծրագրերի ղեկավարների 2023-2024 ուստարվա հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ գործող կանոնակարգի պահանջները հաշվի առնելով, գիտխորհրդի նախորդ նիստում քվեարկությամբ հաստատվել են 2024-25 ուստարվա համար հայտագրված կրթական ծրագրերի ղեկավարները: Այս նիստում կլսենք ծրագրերի ղեկավարների 2023-24 ուսումնական տարվա հաշվետվությունը: Հավելեց, որ գիտխորհրդի նախորդ նիստում «Տնտեսագիտություն» բակալավրի կրթական ծրագրի ղեկավար է հաստատվել Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Հայրապետյանը և 2023-24 ուստարվա հաշվետվությունը կներկայացնի ծրագրի նախկին ղեկավար Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Կարեն Եղոյանը:

2. Տ.գ.թ., դոցենտ Կ.Եղոյանը նշեց, որ հաշվետու տարում ծրագիրը լուրջ վերանայվել է: Բոլոր առարկաների գծով կազմվել են նոր նկարագրիչներ և ուսպլաններ, փոփոխվել են նաև

գնահատման ձևերը: Հավելեց, որ կարևորում է այն փաստը, որ հաշվետու տարում Տնտեսագիտություն մասնագիտությամբ բոլոր ուսանողները հաջողությամբ ավարտել են բակալավրի կրթական ծրագիրը:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի ղեկավարն է ՏԿՖ դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նարինե Միրզոյանը, ով կներկայացնի 2023-24 ուստարվա հաշվետվությունը:

4. Տ.գ.թ., դոցենտ Ն.Միրզոյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածը բավականին ծանրաբեռնված տարի է եղել: Ծրագրի վերանայման համար ստեղծվել է աշխատանքային խումբ և վերջինիս ջանքերի արդյունքում ուսպլաններում ներառված 9 կրեդիտանոց և 3 կրեդիտանոց դասընթացների կրեդիտները փոփոխվել են և դարձել՝ 6 կրեդիտ, կիսամյակների և դասընթացների անվանումների որոշակի փոփոխություններ են կատարվել: Տ.գ.թ., դոցենտ Ն.Միրզոյանը հաշվետվությունն ավարտեց աշխատանքային խմբին ուղղված շնորհակալական խոսքով:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

5. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրագրի ղեկավարն է Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պատշոնակատար, տ.գ.թ. Գնել Սահակյանը: Հավելեց, որ 2023-24 ուստարվա հաշվետվությունը կներկայացնի տ.գ.թ, ասիստենտ Գ.Սահակյանը:

6. Տ.գ.թ, ասիստենտ Գ.Սահակյանը նշեց, որ հատկապես կարևորում է այն փաստը, որ կրթական ծրագրի փոփոխման արդյունքում մասնագիտական դասընթացների դասավանդումը 2-րդ կուրսից տեղափոխվել է 1-ին կուրս: Հավելեց, որ այս սկզբունքը որդեգրել են նաև մյուս ծրագրերը, ընդգծեց սեմինար պարապմունքները գործնականով փոխարինելու կարևորությունը: Ամփոփ, թվային տվյալներով ներկայացրեց «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրագրի 2023-24 ուստարվա շրջանավարտների գրանցած արդյունքները: Մտահոգություն հայտնեց ավարտական աշխատանքների ընտրության հետ կապված՝ նշելով, որ հաշվետու ժամանակահատվածում «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրագրի 70 ուսանողից (այդ թվում՝ 30-ը տեղափոխվել էին Արցախից) միայն 37 ուսանող է ավարտական աշխատանքը կատարել ծրագրի շրջանակում, մյուսները հիմնականում նախընտրել են ավարտական աշխատանքը կատարել «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի շրջանակում: Նշեց, որ պետք է պարզել խնդիրը՝ հավելելով, եթե գրանցված փաստը լավ աշխատանքի արդյունք է՝ այլ բան է, եթե դժվարությունն է պատճառը՝ մտածելու տեղիք է տալիս:

Հարցեր չինչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

7. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Ֆինանսներ» մագիստրատուրայի կրթական ծրագրի ղեկավար է հաստատվել Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Կարեն Սահակյանը: Հավելեց, որ «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրատուրայի կրթական ծրագրի 2023-24 ուստարվա հաշվետվությունը կներկայացնի տվյալ ժամանակահատվածում ծրագրի ղեկավարը՝ Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պատշոնակատար, տ.գ.թ. Գ.Սահակյանը:

8. Տ.գ.թ, ասիստենտ Գ.Սահակյանը նշեց, որ հաշվետու տարում «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրատուրայի կրթական ծրագիրը գործել է միայն հեռակա ուսուցման գծով և միայն 2-րդ կուրս է ունեցել, հաշվետու տարում ծրագրի շրջանավարտներից 15-ը տեղափոխվել էին Արցախից: Փաստորեն մագիստրոսական ծրագիրը չի կայացել և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման գծով: Այդ պատճառով այս պահին լիցենզավորման գործընթացի մեջ է 1 տարի տևողությամբ (60 կրեդիտանոց) «Ֆինանսներ» մագիստրոսական ծրագիրը: Հավելեց, որ որպես ամբիոնի վարիչի պատշոնակատար կարևորում է «Բանկային գործ», «Ֆինանասներ» և «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մագիստրատուրայի կրթական 3 ծրագրերի կայացման հարցը:

Հարցեր չինչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

9. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մագիստրատուրայի կրթական գործող ծրագիրը 2024-25 ուստարվա համար հայտագրված չէ, քանի որ մագիստրոսական ծրագիրը չի կայացել և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման գծով: Հավելեց, որ «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մագիստրատուրայի կրթական ծրագրի 2023-24 ուստարվա հաշվետվությունը կներկայացնի ծրագրի ղեկավարը՝ Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գրիգոր Մնացականյանը:

10. Տ.գ.թ, դոցենտ Գ.Մնացականյանը նշեց, որ հաշվետու տարում «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մագիստրատուրայի կրթական ծրագիրը գործել է միայն հեռակա ուսուցման գծով և միայն 2-րդ կուրս է ունեցել (ընդունվել են 6 ուսանող, այս պահի դրությամբ ունենք 4 ուսանող): Իրավիճակը մտահոգիչ է, պետք է ապագային միտված քայլեր արվեն. 1) մագիստրոսական ծրագրի ժամկետի կրճատում՝ մինչև 1 տարի, 2) ծրագրի վերջնարդյունքների որոշակիացում, 3) Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի հետ սերտ համագործակցություն՝ ինչը թույլ կտա ծրագրի շրջանավարտին ազատվել որակավորման որոշ մոդուլների քննություններից:

11. Ելույթ ունեցավ տ.գ.թ., դոցենտ Կ.Եղոյանը՝ մատնանշելով, որ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի հետ սերտ համագործակցությունը թույլ կտա ազատվել քննություններից մինչև ACCA F3 մակարդակ:

12. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, ծավալված քննարկումն ամփոփելով, ընդգծեց, որ համագործակցության հնարավորությունը շատ մեծ է, քանի որ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի (CAAA) տնօրենը՝ ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի նախկին վարիչ Հայկ Գերասիմի Մնացականյանն է, իսկ «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մագիստրատուրայի կրթական գործող ծրագրի ղեկավար, տ.գ.թ, դոցենտ Գ. Մնացականյանը՝ դասավանդում է նաև այդ պալատում:

Հարցեր չինչեցին:

13. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրատուրայի կրթական ծրագրի ղեկավարն է Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տեխ.գ.թ. Հարություն Զաքոյանը: Հավելեց, որ 2023-24 ուստարվա հաշվետվությունը կներկայացնի տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը:

14. Տեխ.գ.թ, դոցենտ Հ.Զաքոյանը ներկայացրեց ծրագրի դինամիկ զարգացման գործընթացը (ISO միջազգային ստանդարտներին համապատասխան): Հավելեց, որ ծրագրի շրջանակներում գործող բազային ուսումնական պլանը համապատասխանում է միջազգային ստանդարտներին և այս մասով մասնագետների պատրաստման լայն հնարավորություն ունենք, այդուհանդերձ պարբերաբար կատարվող փոփոխությունները ավելի լավարկման նպատակ են հետապնդում: ՀՀ-ում գործող այլ բուհերի հետ համեմատության առումով այս ծրագիրը պատրաստում է բիզնեսներին ուղղված Կառավարման մագիստրոսի որակավորմամբ մասնագետներ (Master of Management Economics): Ամբիոնի համատեղ ջանքերի, թիմային աշխատանքի շնորհիվ ծրագիրը միշտ կայանում է և՛ առկա (22 ուսանող), և՛ հեռակա (12 ուսանող) ուսուցման գծով:

Հարցեր չինչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

15. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրատուրայի կրթական ծրագրի ղեկավարն է Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ տ.գ.թ., դոցենտ Աննա Հակոբջանյանը: Հավելեց, որ 2023-24 ուստարվա հաշվետվությունը կներկայացնի տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը:

16. Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը նշեց, որ ամփոփ կներկայացնի հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակում կատարվածը և նկատառումները: Ներկայացրեց 2023-24 ուստարում ծրագրի կայացման մասով պատկերը՝ առկա ուսուցման գծով՝ 19 ուսանող, հեռակա ուսուցման գծով՝ 10 ուսանող: Թվարկեց կատարված

աշխատանքները՝ 1) վերանայվել են դասընթացների նկարագրիչները, 2) փոփոխություններ են կատարվել ուսումնական պլաններում, 3) կազմակերպվել են վարպետության դասեր (10 հրավիրյալ դասախոսներ), 4) կազմակերպվել են արտալսարանային դասեր, 5) մագիստրանտները մասնակցել են մասնագիտական գիտաժողովի «GLOBALMIND UPGRADE 360» և ստացել են մասնակցության սերտիֆիկատներ: Եկող տարվա համար նախատեսված է ԵՊՀ Միջազգային համագործակցության վարչության միջոցով հրավիրյալ դասախոսներ ունենալ, անգլերենով դասավանդվող 2 դասընթաց է նախատեսվել՝ յուրաքանչյուր կիսամյակում 1 դասընթաց: Ամփոփելով հաշվետվությունը նշեց, որ պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չինչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

17. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրատուրայի կրթական ծրագրի ղեկավարն է Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Ռուբեն Գևորգյանը: Հավելեց, որ 2023-24 ուստարվա հաշվետվությունը կներկայացնի տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը:

18. Տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը նշեց, որ ծրագիրը շարունակել է իր համագործակցությունը Սան Խոսեի պետական համալսարանի (ԱՄՆ) հետ: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրում փոփոխություններ չեն եղել, մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանները լիովին համահունչ են Սան Խոսեի պետական համալսարանի «Տվյալների վերլուծություն» ծրագրի պլանի հետ, բայց նախատեսվում է ուժեղացնել ծրագրի հետազոտական բաղադրիչը: Ընդգծեց, որ Սան Խոսեի պետական համալսարանը գործում է Սիլիկոնային հովտում և այս առումով ավելի մեծ հնարավորությունների է տիրապետում: Հավելեց, որ ուսանողների կողմից ծրագրի շրջանակում կատարված, բնույթով տարբեր գիտական և բիզնես հետազոտությունները շվեյցարական լաբորատորիայի, լոնդոնյան և հայկական կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության արդյունք են, որոնց հիման վրա կան հրապարակումներ:

Հարցեր չինչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

19. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, օրակարգի 4-րդ հարցի քննարկումն ամփոփելով, նշեց, որ ֆակուլտետի հիմնական խնդիրը առնչվում է մագիստրոսական ծրագրերի կայացմանը, մասնավորապես՝ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը չունի ոչ մի ծրագիր, Ֆինանսների ամբիոնը ունի միայն 1 ծրագիր: Ընդգծեց, որ այս միտումը ԵՊՀ-ում ընդհանուր է: Խնդրի լուծման նպատակով ԵՊՀ ղեկավարությունը որդեգրել է հետևյալ քաղաքականությունը՝ մագիստրատուրայի այն կրթական ծրագիրը, որը ունի 15 և ավելի ուսանող, հրավիրյալ դասախոսներ և մրցակցային

ընդունելություն՝ ետ կստանա շահույթի 40-60%-ը, կրեդիտարությունից կախված: Նպատակը ծրագիրը իրականացնողների հավելյալ աշխատելու հնարավորությունները մեծացնելն է: Հավելեց, որ այս պահին մագիստրատուրայի գործող ծրագրերից 3-ը՝ «Տվյալների գիտությունը բիզնեսում», «Շուկայագիտություն (մարքեթինգ)», «Գործարար վարչարարություն (կառավարում)» բավարարում են այդ չափանիշներին: Հետևաբար մշակվող ծրագրերը ևս պետք է այս տրամաբանության շրջանակում տեղավորել: Վերջում շնորհակալություն հայտնեց ֆակուլտետում գործող մագիստրատուրայի և բակալավրի կրթական ծրագրերի ղեկավարներին և առաջարկեց քվեարկությամբ հաստատել 2023-2024 ուստարվա կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունները՝ գնահատելով բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի և բակալավրի կրթական ծրագրերի ղեկավարների 2023-2024 ուստարվա ներկայացրած հաշվետվությունները և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2023-2024 ուստարվա կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունները՝ գնահատելով բավարար:

Հաշվետվությունները գնահատվեցին բավարար՝ քվեարկության 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

5. Ընթացիկ հարցեր

5.1 ԼՍԵՑԻՆ. Կառլեն Խաչատրյանի, Աննա Հակոբջանյանի և Քրիստինե Նիկողոսյանի համահեղինակած՝ “Bridging Academia and Industry: Unraveling University-Industry Collaborations in the EU and Transitioning Economies (Insights from Armenia and Italy)” վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ հարցը:

5.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը նշեց, որ պահանջվող կարգին համապատասխան մենագրության էլեկտրոնային տարբերակը ուղարկվել է խորհրդի բոլոր անդամներին: Ներկայացրեց մենագրության համահեղինակներին՝ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյան, «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյան, «Կառավարման և գործարարության» ամբիոնի նախկին ասպիրանտ Ք.Նիկողոսյան: Մատնանշեց, որ կատարված աշխատանքի հիմքը միջազգային և տեղական փորձի ուսումնասիրության համեմատական վերլուծությունն է: Այդ նպատակով հարցումներ են անցկացվել ՀՀ-ում գործող 8 խոշոր բուհերում, Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) և Հայաստանի

արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) ակտիվ համագործակցության շրջանակներում՝ մասնավոր հատվածի և ԲՈՒՀ-ի փոխհարաբերությունների, համագործակցության բնույթի բացահայտման համատեքստում: Ընդգծեց հետազոտության նպատակը՝ վեր հանել առկա խնդիրները, պարզել շրջանավարտի ստացած գիտելիքների և ձեռքբերած հմտությունների հնարավոր իրացման չափը: Նշեց, որ մենագրությունը գրախոսել են «Կառավարման և գործարարության» ամբիոնի դոցենտներ, տ.գ.թ. Ն.Միրզոյանը և տ.գ.թ. Ա.Գալստյանը, ՀՊՏՀ «Կառավարչական հաշվառման և աուդիտի» ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Լ.Գրիգորյանը:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ընդգծեց, որ մենագրությունը ՀՀ Գիտության կոմիտեի թեմատիկ ֆինանսավորման դրամաշնորհի 3 տարվա կատարված հետազոտության արդյունք է: Հավելեց, որ «Բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացման խնդիրները և լուծման ուղիները ՀՀ-ում» գիտական թեմայի շրջանակում իրականացված աշխատանքների արդյունքների մի մասի հիման վրա լույս է տեսել 2 հոդված Scopus շտեմարանում ինդեքսավորված միջազգային գիտական պարբերականներում: Հավելեց, որ այս տիպի դրամաշնորհները ոչ միայն ֆինանսական, այլև գիտական արդյունքի ձևավորման աղբյուր են: Մատնանշեց, որ երեք գրախոսների դրական կարծիքները բավարար են մենագրությունը տպագրության երաշխավորելու համար և առաջարկեց հարցը դնել քվեարկության:

5.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով երեք գրախոսների՝ ԵՊՀ «Կառավարման և գործարարության» ամբիոնի դոցենտներ, տ.գ.թ. Ն.Միրզոյանի և տ.գ.թ. Ա.Գալստյանի, ՀՊՏՀ «Կառավարչական հաշվառման և աուդիտի» ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Լ.Գրիգորյանի դրական կարծիքները և ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի, «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի, «Կառավարման և գործարարության» ամբիոնի նախկին ասպիրանտ Ք.Նիկողոսյանի համահեղինակած՝ “Bridging Academia and Industry: Unraveling University-Industry Collaborations in the EU and Transitioning Economies (Insights from Armenia and Italy)” վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

Մենագրությունը երաշխավորվեց տպագրության՝ քվեարկության 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ